մուհաֆիզության օրոք կազմված ելից և մտից (իրադաթ վե մասարիֆ) դեֆթերը օսմանյան օկուպացիոն իշխանությունների՝ նվաճված երկրամասերում վարած հարկային քաղաքականության հարստահարիչ բնույթը բացահայտող եզակի մի փաստաթուղթ է, որը, միաժամանակ, շարադրված լինելով վարչական ապարատում հարյուրամյակներ ի վեր կիրառվող հաշվապահական սկզբունքներով, կայսրության վարչատնտեսական համակարգի ուսումնասիրության առավել հավաստի սկզբնաղբյուրների շարքը կարող է դասվել։

Նույնքան բովանդակալից և խոսուն են նաև 1730-ական թթ. մուկաթիայի դեֆթերներն ու հարկերի հատուցմանը վերաբերող մյուս պաշտոնական վավերագրերը, որոնց մեջ ավելի մանրամասն են արձանագրված Արարատյան երկրի գյուղական համայնքներից գանձվող բնամըթերքների քանակն ու դրանց դրամական համարժեքները։ Ուշագրավ տվյալներ են հաղորդված հատկապես Ուչքիլիսայի (Վաղարշապատ), Քանաքեռի, Բջնիի, Արզականի, Զագավանքի, Առինջի, Արզնիի, Գյամրեզի, Ճաթղռանի, Սամաղարի, Աղավնատան, Նազրևանի, Գյոգ-գյումբեթի, Դառնիի, Զոլմագչիի (Նորք), Նորագեղի, Շենգավիթի, Կարպիի, Սաֆիաբադի, Մոլլաբայազիդի, Բաթռինջի, Եղովանի, Արալըղի, Ակոռու, Խաչափարախի, Հաջի-իլյազի, Մեհմանդարի, Ջանֆիդայի, Ջաֆարաբադի (Արգավանդ), Հաջի-բեկլուի, Ղամարլուի (Արտաշատ), Դավալուի (Արարատ), Խոյլասարի, Եղվարդի, Դվինի և բազմաթիվ այլ մեծ ու փոքր գյուղերի համայնքների վրա դրված հարկային պարտավորությունների մասին։

Կասկածից դուրս է, որ խնդրո առարկա վավերագրերի ճշգրիտ վերծանված գիտական բնագրերի և դրանց թարգմանությունների՝ անհրաժեշտ ծանոթագրություններով օժտված հրապարակումները, մեծ չափով կարող են նպաստել նշված ժամանակաշրջանի և՛ սոցիալ-տնտեսական, և՛ քաղաքական պատմության առավել հանգամանալից հետազոտության կարոտ էական հարցերի լուսաբանմանը։ Այդպիսի աշխատանքներ արդեն իսկ նախատեսված են Մաշտոցի անվան Մատենադարանի առաջիկա տարիների գիտահետազոտական պլաններում։

Գիտական ավելի լայն շրջանակներին մատչելի դարձնելու նպատակով ստորև աղբյուրագետ-պատմաբանների ուշադրությանն ենք ներկայացնում, մեզ արդեն ծանոթ, Երևանի բերդի 1724—1725 թթ. մուկաթիաների Արքունի դիվանին ներկայացված ելից և մտից դեֆթերի թուրքերեն բնագրի լիակատար վերծանությունն ու հայերեն թարգմանությունը։ Կից տրվում է նաև վավերագրի նմանահանությունը, որը մի քանի անգամ փոքրացված լինելու պատճառով, առավել դժվարընթեռնելի լինելով հանդերձ, կարող է օգնել որոշակի գաղափար կազմելու այս կարգի հաշվետվությունների և օսմանյան պետական գրասենյակային հաշվապահական համակարգի մասին։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

Մ ա տ յ ա ն

1137 և 1138 թթ. վերաբերող Երևանի մուկաթիաների

Երևանի մուհաֆիզ, մեծարգո Ռաջաբ փաշայի ծանուցմամբ, որ համապատասխանում է Երևանի ռուզնամչի Մուհամադ [էֆենդիի] և դեֆդերդար Սուլեյման էֆենդիի [գրանցումներին] և գերագույն հրամանագրի բովանդակությանը։

1139 թ. ռաբի՛ I ամսի 12-ին (1726 թ. նոյեմբերի 7)

1137 թ. վերաբերող Երևանի մուկաթիաների եկամուտները նախորդ մուհաֆիզ մեծարգո վեզիր Ահմադ փաշայի օրով

Կըրխբուլաղի նահիայի մուկաթիան՝	*9500*	*առյուծով ղլոտա*
Կարպիի նահիայի մուկաթիան՝	*7000*	»
Գառնիի նահիայի մուկաթիան՝	*7700*	»
Շարուրի նահիայի մուկաթիան՝	*15000*	»
Սուրմալուի և Արալըղի նահիայի մուկաթիան՝	*5400*	»
Կողբի աղահանքերի մուկաթիան՝	*6000*	»
Դարաչիչագի մուկաթիան՝	*1500*	»